ՆՈՐ-ԴԱՐ

№ 147 ՏԱՍՆՕՐՅԱԿԻ ՏԱՐԻ Ուրբաթ 29 Օգոստոսի 1897 Ուրբաթ 29 Օգոստոսի ՏԱՍՆՕՐՅԱԿԻ ՏԱՐԻ № 147

Տարեկան 10 բուբլի, վեց ամիսը՝ 6 բուբլի, երեք ամիսը՝ 3 բ. 50 կ. ամիսը՝ 1 բ., հատով 5 կ. Բաժանորդ գրւում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը։

Խմբագրութեան հասցէն Тифлисъ. Редакція „Норъ-Даръ" կամ Tiflis. Rédaction „Nor-Dar".

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի սուրբ օրերից) ժամը 9-ից մինչև 3-ը։ Յայտարարութիւնները ընդունւում են ամեն լեզուներով Յայտարարութիւնների գառին 3 կ., բակլամների համար կրկնապատիկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քրանիկոն.—Լուրեր։
Աքսաքեումանի հայոց եկեղեցու հիմնարկէքի հանդէսը։
Գազան.մարդ։
Թղթակցութիւններ.— Խըզնուս։
Քաղաքական.—Ռուս-Ֆրանսիական դաշնակցութիւնը։
Հեռագրներ։
Բանասիրական.— Տիպեր ու տպաւորութիւններ։
Տեղեկատու։
Յայտարարութիւններ։

ՔՐՈՆԻԿՈՆ

Մեզ հաղորդում են, որ Զաքաթալի շրջակայ գիւղերում քան հոգուց բազկացած աւազակային խումբ է երևացել և Զաքաթալայի գաւառապետի կարգադրութեամբ հարկաւոր տեղերում պահապաններ են կարգուած աւազակներին բռնելու համար։ Գաժում են, որ այդ աւազակային խումբը լսելով, որ իրենց բռնելու համար հետամուտ են լինում, թողել են Զաքաթալայի կողմերը և անցել Դախէթի կողմը։ Զաքաթալայի գաւառապետը այդ մասին հեռագրել է Սղնախի գաւառապետին, որպէսզի աւազակներին բռնելու համար հարկաւորմիջոցները ձեռք առնի։

—

Երկուշաբթի, սեպտեմբերի 1 ին, ամարային արձակուրդներից յետոյ, տեղի է ունենալու Թիֆլիսի քաղաքային նորակազմ խորհրդի նիստը։ Իրաւասունեբի երդումնից յետոյ, քաղաքագլխի պաշտօնակատարը կառաջարկի խորհրդին ժամանակ նշանակել քաղաքագլխի ընտրութեան համար։ Այնուհետև մատդրութիւն կայ խորհրդին նախագահող ընտրելու այն դէպքերի համար, երբ քաղաքագլուխը չի կարող նախագահել։

—

Խորհրդի այդ նիստին կըքննուի, ի միջի այլոց, քաղաքային վարչութեան եղրակացութիւնը Թիֆլիսում բնակարանների առուրբ մացնելու խնդրի մասին։

—

Մայրաքաղաքի թերթերի ասելով, երկրաբանների XII կոնգրեսի գրասենեակում ստորագրութեան թերթեր են բացուած դէպի Օրաբատեան դաշտը, Գովկաս և Ղրիմ ճանապարհորդել ցանկացող անդամների համար։ Առաջին ճանապարհորդութիւնը կըտեի 11 օր և իւրաքանչիւր մասնակցողի վրայ կընստի մօտաւորապէս 100—120 բուբլի։ Դէպի Գովկաս և Ղրիմ ճանապարհորդելու համար երեք ուղեգիծ կայ. 1) Խարկովի վրայով, 2) Կիևի վրայով և 3) Վոլգայի վրայով։

—

Սեպտեմբերի 7-ին Թիֆլիս կըհասնեն երկրաբանների միջազգային կոնգրեսի ոչ թէ 400, ինչպէս առաջ էր հաղորդուած, այլ 230 անդամ։ Այդ մասին հեռագրով տեղեկութիւն է տրուած քաղաքագլխի պաշտօնակատարին։

—

Նահանգապետներին առաջարկուած է իրենց կարծիքը յայտնել, թէ ինչ միջոցներով աւելի յարմար է վերացնելու արհեստաւորաց առանձին դասակարգը։

—

Թիֆլիսում լուր է պատում, թէ չուտով քաղաքս է գալու Բերլինի հռչակաւոր պրոֆեսոր բժիշկ Լայդենը։

—

Օգոստոսի 27 ին Թիֆլիսի քաղաքային վարչութեանը ներկայացան արտասահմանի մի խոշոր ֆիրմայի երկու ներկայացուցիչներ, որոնք եկած են բանակցելու քաղաքս ելէքտրական լուսով լուսաւորելու համար։

—

Թիֆլիսում կենդանիների մէջ ժանտախտ է երևացել։ Այդ հիւանդութեան դէմ կռուելու համար նշանակուած են երկու անասնաբոյժ—պ. պ. Մելքումեան և Վարշամեան. ստատած կենդանիների համար յատուկ տեղ է որոշուած։ Բացի դրանից, ժանդախտով հիւանդ կենդանիներին առանձնացնելու համար Վերայում և Հալաբարում յատուկ տեղ պիտի որոշուի։

—

Երկրագործութեան դեպարտամենտի տեսուչ պ. Խամեակով մեկնել է դիտելու յիշեալ դեպարտամենտի իրաւասութեան տակ գտնուած գիւղատնտեսական ուսումնարանները Ղրիմում և Գովկասում։

—

Շամախու քաղաքային վարչութիւնը, «Գաւկազիւ» ասելով, միջնորդել է Գովկասի ուսումնարանական շրջանին, որ Գովկասում բացուելիք արհեստագիտական և տեխնիկական ուսումնարանների մի մէկը բացուի Շամախում։

—

Օգոստոսի ճապոնական հիւպատոսը տեղեկութիւն է ստացել, որ ռուսական կերոսինը ճապոնական նաւերով Բաթումից անմիջապէս ճապոնիա արտահանելու ծրագիրը չուտով կիրագործուի։ Մատդրութիւն կայ առևտրական մի ընկերութիւն հիմնելու առևտրի այդ ճիւղով պարապելու համար։

ՄԵԶ ԳՐՈՒՄ ԵՆ

ԼԱԳՈՒՆԱՅԻՑ, (Սղնախի գաւառ). Գարնան սկիզբներում անձրևներ չլինելու պատճառով ծխախոտի ցանքսերը վնասուեցան և առատ բերք չէին խոստանում, շատ տեղերում էլ մանաւանդ Դախէթում, որոնք անջրդի տեղեր էին, ծխախոտի ցանքսերը չորացան և չկարողացան բարձրանալ, ինչպէս հարկն էր. բայց յուլիսի վերջերում եկած անձրևները նորից կենդանացրին չորացած և ծարաւ արտեր. ծխախոտները սկսեցին բարձրանալ և գիւղացիների յոյսը նորից կենդանացաւ։ Այժմ ծխախոտները արդէն հասել են և գիւղացիները սկսել են քաղել և միւս կողմից էլ ծխախոտներին նպաստող եղանակները բաւական օգնեցին գիւղացիներին։ Մինչև եկող սեպտեմբերի 10—15 ը գրեթէ ամեն տեղ կըվերջանայ ծխախոտի քաղը։ Նպաստող եղանակների պատճառով այս տարի բաւական լաւ ծխախոտ է ստացւում ամբողջ Դախէթում թէ գոյնի, թէ որակի և թէ տեսակի կողմից։ Իսկ հացաբոյսներն այս տարի կարելի է ասել միջակ է, իսկ մի քանի տեղերում էլ վատ։ Խոզղի բերքը կարելի է ասել թէ միջակ է։ Ալիւրի և գարու գները օրէցօր բարձրանում են, իսկ մրգեղէնների գինը շատ ընկած է այս տարուայ մրգեղէնների առատութեան պատճառով։

Սեպտեմբերի 1-ից 31 ղեկտեմբերի «Նոր-Դար»-ին բաժանորդ են գրւում և վճարում են 4 բ. 50 կ.։

ՕՌԱՍԹՈՒՄԱՆԻ ՀԱՑՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԻՄՆԱՐԿԷՔԻ ՀԱՆԴԷՍԸ

Տեղւոյս հայ ժողովրդի սրտի մօտիկ առարկայ խօսակցութիւնը մեր եկեղեցու հիմնարկութիւնն է, որը տասնեակ տարուայ ընթացքում այս և այն կողմը խփուելով, այժմս կատարման ստացաւ, շնորհիւ բազում առաջի կարգի վաճառական մեծ. Յակովբ Խահակեան Ադամեանցի ազգասիրական և կրօնական ջերմեռանդութեան։

Անցեալ օգոստոսի 19-ին, բժշկական և ոստիկանական վարչութիւնները հայոց եկեղեցու համար նախապէս նշանակուած գեռինը յանձնեցին վիճ. Գոնսիստորիայից նշանակուած հատւածմատոր Սբ. Հոգեհամ քահանայ Ղազարեանցին 628 քառակուսի սաժէն տարածութեամբ, որը գտնւում է 96 համար հողաբաժնի դէմ խճուղու ձախ կողմը, լեռան գառիվայրի վրայ։ Թէև սոյն գեռինը գտնւում է Օրաորդաւանի կետրոնից հեռու գրանով ներկայիս ժողովրդի համար անյարմարութիւններ է առաջացնում, բայց տեղի դիրքը լի նելով բարձրաւանդակի և ճանապարհի վրայ, ապագային ունենալու է մի գեղեցիկ և աչքի ընկնող շինութեան տեսք։

Այսօր օգոստ. 24-ին, փառաւոր հանդիսաւորութեամբ սկսուեցաւ սուրբ օրհնութեան հանդէսը։

Եկեղեցաշէն մեծ. պ. Ադամեանցը յատկապէս հրաւիրակ ուղարկելով Դաւիթ Աւագ քահանայ Եալալեանցին Սուրամ Թեմիս առաջնորդ Դէորգ սրբազան Արքեպիսկոպոսի մօտ, խնդրեց իւր ներկայութեամբ և օրհնութեամբ վեհացնել աւուր հանդէսը։

Առաւօտեան ժամը 10-ին սկսուելով հանդէսը մերձակայ տնից, հոգևորական դասը գնում էր նշանակել տեղը վայելուչ եկեղեցական զգեստներով, զգուշաւոր և պատշաճական կարգով։ Առաջից գնում էին կերոնակիրները և մեծ արծաթեայ խաչակիրը, մէջ տեղում գնում էր միւռոնակիր քահանան քշուցակիրներով և շրջապատուած քահանաներով խնկարկող սարկաւագի հետ միասին, ապա Թեմակալ առաջնորդը և Ա-

ՏԻՊԵՐ ՈՒ ՏՊԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(Նամականի Գարսկաստանի)

Շատերն իրենց տպաւորութիւնները սկսում են Ադամ-Եւայից, բայց ես պէտք է սկսեմ յետին ժամանակներից, այն է՝ Գայէն և Աբէլ ադամորդիներից, որովհետև Գարսկաստանում առաջին անգամ դրանց պատահեցի...։

Երկու մերկ երիտասարդ Մուհամմէդի ածելիով գլուխները մէջ տեղերից ածելով կոստաձև քերծած, երկու փունջ մազեր աջ ու ձախ ականջներին փռուած, մէկը գաժան Գայէնի պէս, միւսը մեղմ Աբէլի պէս, մի փարչ մածուն բռնած, փոխէ-փոխ մատնակոխ էին անում, լպստում ու նեղլիկ փողոցներով առաջ էին գնում։ Ցայտնի է, որ Աբէլը հովիւ էր. երեսում էր, մածունը նա էր պատրաստել, բայց իմ տեսած միջոցին Գայէնն էր, որ ապահովեամբ կլանում էր այն՝ իւր չորս մատներով ու խէթ-խէթ դիտում իւր չուրջը։

Հետաքրքրութիւնս չարժուեց, հետևեցի այս նոր գարու ադամորդիներին. Նրանք մի քանի փողոց անցնելուց յետոյ, մտան բազանիս։ Դու ոչ մտնես, դրանք պարսկական բազանիսի քիսաչիներն էին, որ փողոց էին գուրս եկել իրենց նախահօր մերկութեամբ ճաշուայ ուտեստ առնելու։ Ինքնամոռացութեան մէջ ընկնելով ինձ այնպէս թուաց, թէ դրանք Գայէնն ու Աբէլն էին։ Ես էի, որ հետեում, հետաքրքրւում ու զարմանում էի, իսկ այնտեղ եղած բազմաթիւ պարսիկ ադամորդիք սովորական անտարբերութեամբ էին նայում այդ տարօրինակ երևոյթին կամ բոլորովին անուշադիր էին թողնում։ Մօտեցայ բազանիսին, որի տանիքից ամպի նման բուզ ու մուխ էր բարձրանում. կաուրը կիր ու աղիւսից շինած կամարի ձև ունէր, որի շուրջը շարուած էին փոքրիկ ապակեայ կլոր պատուհանները ճիշտ ասիական ճաշակով։ Բազանիսի սպիտակ գաջած դրան ճակատը կարմիր ու կապոյտ գոյներով նախշած էր. չոքած դիրքով դիմագէմ նկարուած էր երկու հրեշտակ պարսկական երկար փափախները գլուխներին. երևի նրանց Գաբրիէլ-Միքայէլն էին։ Այս նկարին երկար նայեցի ու ծիծաղեցի. փափախ ու հրեշտակ. մի լինի, չի ծիծաղիլ։ Բայց յետոյ ընկերս ինձ հանգարտեցրեց. «Մի զարմանա, ասաց, Աբրահամի հրեշտակները գլուխներին չալմա ունին, որանք որ փափախ ունենան խօմ մեղք չէ». Ի հարկէ, մեղք է. չէ որ հրեշտակի գլխին լոյս պէտք է լինի. եթէ եւրոպացիք էլ սրանց նման երեակայեն երկնքի հրեշտակներին, այն ժամանակ նրանց գլխին պէտք է կարուղ, չլեայա, ցիլինդր դնեն—Դէ, ի հարկէ, գրեթէ, նրանք էլ այդպէս են անում. հայը հրեշտակ նկարում է սև մազերով ու կապոյտ աչքերով է դուրս բերում։

Բայց ախր ո՞րն է ուղիղ։

Ահա մի հարց, որ կարօտ է լուծման։ Մենք շատ վիճեցինք, որոշ եղրակացութեան չհասանք. վերջը վճռեցինք այդ հարցը յանձնել Շիքագոյի կրօնական մեծ ժողովին...։

Սակայն ինչ էլ լինի, ինձ շատ խորթ է թուում. ես չեմ կարող հրեշտակի գրլխին թուրքի չալմա փաթաթել, չնայելով որ մեր վեցհեւանոց սերովբէների ու քերովբէների վերնաշեները չալմայի մի քիչ նմանութիւն ունին։

Ներողութիւն, որ բազանիսի պատկերը իմ մէջ ուրիշ մտածմունքներ առաջ բերեց. ես նոր էի եկել Գարսկաստան. ճանապարհին կեղտոտուել էի. այս լաւ եղաւ, որ առաջին անգամ բազանիսի հանդիպեցի։ Գնամ, ասի, գինն իմանամ ու լողանամ. Ներսից լողացողների խառնափնթոր աղաղակներն էին լսում։ Ներս մտնելս գիտեմ. մերկանդամ պարսիկները տեսան գեաուրիս, վրայ թափուեցին, յետ մղեցին, որ չլինի թէ Իսլամի-որդոց մաքուր ջուրը մուրտահեմ...։ Էհ, ողորմած Աստուած, ասի ու հեռացայ։

Բ.

Ադամորդուց սկսեցի. այժմ նկարագրեմ այն դրախտը, որի մէջ դրել է նրանց Աստուած և ուր բաղդ ունեցայ, մի տարու չափ մնալ։ Նկարագրութեան նիւթը Գարսկաստանի Ռաշա քաղաքն է որ գտնւում է Կասպից ծովի հարաւային

վնասուեցան և առատ բերք չէին խոստանում, շատ տեղերում էլ մանաւանդ Դախէթում, որոնք անջրդի տեղեր էին, ծխախոտի ցանքսերը չորացան և չկարողացան բարձրանալ, ինչպէս հարկն էր. բայց յուլիսի վերջերում եկած անձրևները նորից կենդանացրին չորացած և ծարաւ արտեր. ծխախոտները սկսեցին բարձրանալ և գիւղացիների յոյսը նորից կենդանացաւ։ Այժմ ծխախոտները արդէն հասել են և գիւղացիները սկսել են քաղել և միւս կողմից էլ ծխախոտներին նպաստող եղանակները բաւական օգնեցին գիւղացիներին։ Մինչև եկող սեպտեմբերի 10—15 ը գրեթէ ամեն տեղ կըվերջանայ ծխախոտի քաղը։ Նպաստող եղանակների պատճառով այս տարի բաւական լաւ ծխախոտ է ստացւում ամբողջ Դախէթում թէ գոյնի, թէ որակի և թէ տեսակի կողմից։ Իսկ հացաբոյսներն այս տարի կարելի է ասել միջակ է, իսկ մի քանի տեղերում էլ վատ։ Խոզղի բերքը կարելի է ասել թէ միջակ է։ Ալիւրի և գարու գները օրէցօր բարձրանում են, իսկ մրգեղէնների գինը շատ ընկած է այս տարուայ մրգեղէնների առատութեան պատճառով։

Սեպտեմբերի 1-ից 31 ղեկտեմբերի «Նոր-Դար»-ին բաժանորդ են գրւում և վճարում են 4 բ. 50 կ.։

ՕՌԱՍԹՈՒՄԱՆԻ ՀԱՑՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԻՄՆԱՐԿԷՔԻ ՀԱՆԴԷՍԸ

Տեղւոյս հայ ժողովրդի սրտի մօտիկ առարկայ խօսակցութիւնը մեր եկեղեցու հիմնարկութիւնն է, որը տասնեակ տարուայ ընթացքում այս և այն կողմը խփուելով, այժմս կատարման ստացաւ, շնորհիւ բազում առաջի կարգի վաճառական մեծ. Յակովբ Խահակեան Ադամեանցի ազգասիրական և կրօնական ջերմեռանդութեան։

Անցեալ օգոստոսի 19-ին, բժշկական և ոստիկանական վարչութիւնները հայոց եկեղեցու համար նախապէս նշանակուած գեռինը յանձնեցին վիճ. Գոնսիստորիայից նշանակուած հատւածմատոր Սբ. Հոգեհամ քահանայ Ղազարեանցին 628 քառակուսի սաժէն տարածութեամբ, որը գտնւում է 96 համար հողաբաժնի դէմ խճուղու ձախ կողմը, լեռան գառիվայրի վրայ։ Թէև սոյն գեռինը գտնւում է Օրաորդաւանի կետրոնից հեռու գրանով ներկայիս ժողովրդի համար անյարմարութիւններ է առաջացնում, բայց տեղի դիրքը լի նելով բարձրաւանդակի և ճանապարհի վրայ, ապագային ունենալու է մի գեղեցիկ և աչքի ընկնող շինութեան տեսք։

Այսօր օգոստ. 24-ին, փառաւոր հանդիսաւորութեամբ սկսուեցաւ սուրբ օրհնութեան հանդէսը։

Եկեղեցաշէն մեծ. պ. Ադամեանցը յատկապէս հրաւիրակ ուղարկելով Դաւիթ Աւագ քահանայ Եալալեանցին Սուրամ Թեմիս առաջնորդ Դէորգ սրբազան Արքեպիսկոպոսի մօտ, խնդրեց իւր ներկայութեամբ և օրհնութեամբ վեհացնել աւուր հանդէսը։

Առաւօտեան ժամը 10-ին սկսուելով հանդէսը մերձակայ տնից, հոգևորական դասը գնում էր նշանակել տեղը վայելուչ եկեղեցական զգեստներով, զգուշաւոր և պատշաճական կարգով։ Առաջից գնում էին կերոնակիրները և մեծ արծաթեայ խաչակիրը, մէջ տեղում գնում էր միւռոնակիր քահանան քշուցակիրներով և շրջապատուած քահանաներով խնկարկող սարկաւագի հետ միասին, ապա Թեմակալ առաջնորդը և Ա-

ՔԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Ռուսական Գիլան նահանգի գլխաւոր կենդրոնն է. նա թաղուած է կանաչազարդ հարթ անտառի մէջ։ Հաղորը իւր շրջականերով կարելի է երեք մասի բաժանել, դրախտ, դժոխք, քաւարան։ Ռաշտի շրջակայքը դրախտի է նման. գեղականաչ անտառներում վարդն ու սոխակը տարին ինն ամիս իրենց անուշահոտութեամբն ու ժեղեդիով կենդանութիւն են տալիս. բազմատեսակ ծառերն ու ծաղիկներն էլ օդին մաքրութիւն, քաղաքին զովութիւն են մատակարարում։ Մօտակայ անտառներին ուղղութիւն են տուել, մշակել մարդկային ձեռները և փոխարինել պարտէզների և այգիներին։ Դրանց մէջ երեակի են քաղաքի հարաւային կողմը գտնուած բէկլար-բէկի այգին և հիւսիսային կողմը եղած Բուտարը։ Երկու այգումն էլ շինուած են գեղեցիկ ապարանքներ, ուր ամառն անց են կացնում Գարսկի իշխանները։ Անմահական այն դրախտները ժողովրդի համար զբօսավայրեր են. ամեն ոք իրաւունք ունի մտն գալ այնտեղ, զուարճանալ, բնութեան բարիքը վայելել։ Շրինէին անտառները՝ Ռաշտի օդն ապականած կըմնար պարսկական արտադրուող կեղտութիւններից և բրնձի արտերից բարձրացող գոլորշիներից։

Մտնենք քաղաքը, որ սկսում է անտառների մէջ ցած ու ցրիւ շինուած

ցեխապատ խրճիթներով, որոնց գըմբէթաձև կտուրները ծածկուած են խոտով կամ եղէգնով. արտաքուստ ճիշտ Ռուսիայի գիւղական տների ձեւն։ Ռաշտի մէջ մտնենք քաղաք, այնքան տները խառնում ու գեղեցկանում են, իսկ փողոցները նեղանում ու ոտեղանում։ Այստեղ արդէն տներն աղիւսաշէն են և մեծ մասամբ երկհարկանի. կտուրներն էլ ծածկուած են կղմինդրով, այլ կերպ անհնարին է, որովհետև անձրևները խիստ առատ են և օդը խոնաւ. անձրևի հետ կղմինդրն է կտւում, խոնաւութեան դէմ երկհարկանի տան վերնահարկը։ Մի գաղաչափ գետինը փորելիս, ջուր է դուրս գալիս, այնպէս որ կարելի է ասել, թէ Ռաշտը շինուած է այնպիսի մի ծովի վրայ, որի վերին շերտը կազմուած է գաղաչափ աւազայինն հողից։ Անձրև օրերը բաւական տանջանք է նեղ ու ցեխ փողոցներով անցնելը. կտուրներից կղմինդրների վրայով անձրևի ջուր թափւում է ուղիղ գլխիդ, որովհետև այդ ջրային կաթիլները փողոցի երկու կողմը գետնի վրայ կազմում են զուգահեռական երկու մաքուր ծիր, որի վրայով միայն սահուած պէտք է լինես անցնել, եթէ ուզում ես որ ոտներդ շատ չցեխոտուին։ Վերևից թափուած ջրից էլ պէտք է պաշտպանուես անձրևակալով։ Անցնելիս չուրջդ նայիր, տես տեղ-տեղ կանգնած-լճացած ջրերը, աղբերի կոյտերը, դէս ու դէն շպրտած սատկած ձկներն ու մըկ-

Նրանք, չուզեր ու կասեր, այդ ու դարձ
նրանք, ինչպես ասում են, ինքնասպան
եղան, որովհետև չկարողացան հարմարվել
նոր պայմաններին։ Ինչպես ասացի, ես
ինքս ևս ժամանակին ենթարկվել եմ
նման գայթակղության, բայց ինձ հաջող-
վեց ազատվել դրանից։ Ես ինձ ասացի,
որ ինձ համար ավելի լավ է ապրել
աղքատության մեջ, քան ինքնասպան
լինել։ Ես ինձ ասացի, որ ինձ համար
ավելի լավ է ապրել աղքատության մեջ,
քան ինքնասպան լինել։ Ես ինձ ասացի,
որ ինձ համար ավելի լավ է ապրել աղ-
քատության մեջ, քան ինքնասպան լինել։
Ես ինձ ասացի, որ ինձ համար ավելի
լավ է ապրել աղքատության մեջ, քան
ինքնասպան լինել։ Ես ինձ ասացի, որ
ինձ համար ավելի լավ է ապրել աղքա-
տ

ՀԱՅԿԱԿԱՆ ԹԵՐԹԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԵՐՈՒ ՄԱՍԻՆ

Ը. Ա.

Ֆրանսական ուսումնական հրատարակութիւնների մէջ հետաքրքրական գրքոյկ մը կը գտնուի, որ ամենայն ուշադրութեան արժանի է մեր ազգային կեանքի ներկայ շրջանին մէջ։ Այդ գրքոյկին հեղինակն է Ֆրանսայի ամենանշանաւոր գրականագէտներէն մէկը՝ Ֆերտինանդ Պրունեթիէր։ Գրքոյկին նիւթն է ֆրանսական մեծ յեղափոխութեան ժամանակ հրատարակուած թերթերը։ Հեղինակը կը պատմէ, թէ ինչպէս յեղափոխութեան սկզբնաւորութեան հետ միասին ֆրանսական հասարակութեան մէջ ծագեցաւ ազատ մամուլի պահանջը, ինչպէս ամէն կողմէ սկսան հրատարակուիլ թերթեր, որոնք ամէն տեսակ կարծիքներ կը յայտնէին, ամէն տեսակ գաղափարներ կը քարոզէին, ամէն տեսակ ուղղութիւններ կը ներկայացնէին։ Ամէն ինչ կ՚ազատուէր, ամէն ինչ կը ստանար իր ազատ արտայայտութիւնը։ Ամէն ինչ կը փոխուէր, ամէն ինչ կը վերածուէր։ Ամէն ինչ կը ստանար նոր ձեւ, նոր գոյն, նոր կեանք։ Ամէն ինչ կը ծաղկէր, կը ծիլ կու տար, կը զարգանար։ Ամէն ինչ կը ստանար իր ազատ արտայայտութիւնը։

Ֆրանսական մեծ յեղափոխութեան ժամանակ հրատարակուած թերթերուն մէջ կան այնպիսիները, որոնք ամենայն ուշադրութեան արժանի են։ Անոնք կը ներկայացնեն ֆրանսական հասարակութեան տարբեր խաւերուն տարբեր ձգտումները

նակցությունը Եւրոպային նոր կեանքի կը կոչէ և ճշմարիտ գրաւական կը լինի ընդհանուր խաղաղութեան համար եղակի կամքին հակակշիռ լինելով։ Այդ դաշնակցութեան հիմունքները վաղուց են սահմանուած և նոյնն են մնում այժմ։ Ֆրանս ռուսական դաշնակցութեան ապահովութիւնն էւ Բայց խաղաղութեան մասին հակացադութիւնները զանազան են լինում։ Ճաճախ խաղաղութեան մասին են խօսում այնտեղ, որտեղ այդ մասին ամենից քիչ են հոգում։ Բայց կայ իսկական խաղաղութիւն, որի հիմքը կազմում են հզօրութեան միակ նպատակը գիտակցութիւնը, չահերի համերաչխութիւնը, յարգանքը դէպի ուրիշների իրաւունքը։ Նոր ժամանակաշրջան է սկսւում նաստիրութեան և առանձ նութեան քաղաքականութիւնը անցրել է իր դասը։ Բեմ է հանդէս գալիս միաբան գործողութեան, փոխադարձ օգնութեան, մի խօսքով դաշնակցական քաղաքականութիւնը։ Հաստատ և խաղաղ կերպով կը գործի նա ի բարօրութիւն ամենքի և իւրաքանչիւրի։

ՀԵՌԱԳՐՆԵՐ

ԲԵԼՈՍՏՈԿ, 27 օգոստ.— Օգոստոսի 25-ին Նոցին Մեծութիւններն այցելեցին զինուորական հիւանդանոցը։ 26-ին Թագաւոր Կայսրը Մեծ Իշխանների հետ մեկնեց Օսովեց ամրոցը դիտելու Թագուհի Կայսրուհին Դոյլիդայի ագառակից մեկնեց և այցելեց Բելոստոկում տեղական բարեգործական ընկերութեան անկեղանոցները, եկեղեցական Ծխական ուսումնարանները և լուսատրական եկեղեցական դպրոցը։

Բելոստոկում Նոցին Մեծութիւնների այցելութեան յիշատակին, աղքկանց գիմնազիոն հիմնելու համար, բացի հաւաքուած 16,000 ր. նուիրատրութիւններից, քաղաքային վարչութիւնը նուիրել է 5,000 ր. և հրէայ հասարակութիւնը — 25,000 ր.։

ՆԻԾՆԻ ՆՈՎԳՈՐՈԴ.— Օգոստոսի 25 ին մաղթանքից յետոյ, ցած թողուցին ռօնավաճառանոցի դրօշակները։ Ցօնավաճառանոցը պաշտօնապէս փակուած է համարւում։

ԼՈՆԴՈՆ.— «Times»-ին Կ.Պոլսից հեռագրում են, որ դեսպաններն երէկ քննում էին լորդ Սոլսբըրիի մի նոր առաջարկը վեց հոգուց բաղկացած (6 պետութեանց իւրաքանչիւրից մի մի հոգի) մի միջազգային յանձնաժողով հիմնելու մասին, որի հսկողութեան տակ դրուին յունական հակամատների ադբիւրները պատերազմական տուգանքը և հին պարտքերը վճարելու համար։ Յանձնաժողովը հիմնուելուց յետոյ թուրքերը պէտք է հեռանան Թեսալիայից։ Դեսպանները դիմել են կառավարութիւններին թոյլտուութիւն խնդրելով բանակցելու Դրան հետ այդ հիման վրայ։ Սոլսբըրիի առաջարկութեանն առիթ է տուել գրաֆ Մուրաւեովի մի յայտագիրը, որի մէջ ասւում է որ խաղաղութեան բանակցութիւնների ձգձգուելուց Թիւրքիայի և Յունաստանի կրած անհամար վնասի պատասխանատուութիւնն ընկնում է Անգլիայի վրայ։

ՍՈՖԻԱ.— Իշխանն ընդունեց ֆինանսների մինիստր Դեչովի հրաժարականը և նրա տեղ նշանակեց արդարադատութեան մինիստր Թէօդորովին. արդարադատութեան մինիստրութեան ընդհանուր քարտուղար Զգուրևին նշանակեց արդարադատութեան մինիստր, լուսաւորութեան մինիստր Վելիչկովին — առևտրի և երկրագործութեան մինիստր. պատգամաւոր Վազովին — լուսաւորութեան մինիստր։

Խմբագիր-հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

—

Մարդատար № 1 գնացքը դուրս է գալիս Բագուից դէպի Թիֆլիս օրուայ 4 ժամ և 1 րոպ. Թիֆլիս է հասնում առաւօտեան 8 ժամ 0 րոպէ։ Դուրս է գնում Թիֆլիսից դէպի Բաթում առաւօտեան 9 ժամ և 15 րոպ. Բաթում է հասնում երեկոյեան 8 ժամ և 48 րոպէ։

Մարդատար № 9 գնացքը դուրս է գալիս Բագուից դէպի Թիֆլիս գիշերուայ 12 ժամ և 6 րոպ. Թիֆլիս է հասնում երեկոյեան 7 ժամ և 10 րոպ. Դուրս է գնում Թիֆլիսից դէպի Բաթում երեկոյեան 7 ժամ 55 րոպ. Բաթում է հասնում առաւօտեան 8 ժամ 45 րոպ.։

Մարդատար № 2 գնացքը դուրս է գալիս Բաթումից դէպի Թիֆլիս առաւօտեան 7 ժամ 45 րոպ. Թիֆլիս է հասնում երեկոյեան 8 ժամ 34 րոպ.։ Թիֆլիսից դէպի Բագու է դուրս գնում երեկոյեան 9 ժամ 34 րոպ. և Բագու է հասնում օրուայ 1 ժամ 2 րոպ.։

Մարդատար № 4 գնացքը Բաթումից դուրս է գալիս դէպի Թիֆլիս երեկոյեան 8 ժամ 35 րոպ. Թիֆլիս է հասնում առաւօտեան 9 ժամ 11 րոպ.։ Թիֆլիսից դուրս է գալիս դէպի Բագու առաւօտեան 11 ժամին և Բագու է հասնում առաւօտեան 6 ժամին։

ՊՈՍՏԱՑԻՆ ԿԱՌՈՒՑՈՒԹԻՒՆ ԵՐԹԵԼԿՈՒԹԻՒՆ ՌԱՋՄԱՎԻՐԱԿԱՆ ՁՈՒ ՆԱՊԱՐՀԻ ՎՐԱՑ, ՍԿՍԱԾ ՄԱՑԻՍԻ ՄԷԿԻՑ ՄԻՆՉԵՒ *1897* ԹՈՒԻ. ՆՈՅԵՄԲԵՐԻ ՄԷԿԸ,

—

Թիֆլիսից։—5 տեղ ունեցող կառքը առաւօտեան 8 ժամին, գիշերում է Մլէթի կայարանում և հասնում է Վլադիկաւկազ յաջորդ օրը, երեկոյեան ժամը 7 ին։ Դարձեալ 5 տեղ ունեցող կառքը առաւօտեան 10 ժամին, գիշերում է Պասանաուր կայարանում և յաջորդ օրը երեկոյեան 9 ժամ 10 րոպէին հասնում է Վլադիկաւկ. 6 ունեցող կառքերը (առանց գիշերելու) դուրս են գալիս առաւօտեան ժամը 7-ին և երեկոյեան ժամը 3-ին և յաջորդ օրը հասնում են Վլադիկաւկազ—առաջինը առաւօտեան 9 ժամին, իսկ երկրորդը երեկոյեան 5 ժամ 20 րոպ.։

Վլադիկաւկազից։—հինգ տեղ ունեցող կառքերը դուրս են գնում առաւօտեան ժամը 7-ին (գիշերում է Մլէթում) արձեալ առաւօտեան ժամը 9-ին չերում է Գուդաուր կայարանում)։ Թիֆլիս են հասնում յաջորդ օրը երեկոյեան 7 ժամ 25 րոպ. և դարձեալ երեկոյեան 8 ժամ 15 րոպէին։

Վեց տեղ ունեցող կառքերը (առանց գիշերելու) դուրս են գնում առաւօտեան 8 և երեկոյեան 7 ժամին և յաջորդ օրը հասնումեն Թիֆլիս — առաջինը առաւօտեան 8 ժամ 15 րոպ. և երկորդը երեկոյեան 8 ժամին։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԿԱՐ ՈՒ ՉԵԻ ՎԱՐԾՈՒՀԻ

Աւարտել եմ Տիկ. Դեմիտովայի կար ու ձևի գպրոցը **ԱՏԵՍՏԱՏՈՎ**, և ցանկանում եմ ու նեղել աշակերտուհիներ։
Ուսուցման շրջանը **ՎԵՑ ԱՄԻՍ** է լինելու, և արժէ միմիայն **15 ՐՈՒԲԼԻ**
Հասցէն Զուգուրէթի. Վոդոպադեօբնայա փողոց. տուն Սարիբէկովի № 15 20—8

ՍԱՆՏԱԼ ՄԻԴԻ

ԴԵՂԱԴՈՐԾՆԵՐԸ ՊԱՐԻԶՈՒՄ
(ԹՈՒՂՏՐՈՒԱԾ Է ՌՈՒՍԻԱՅՈՒՄ)

Այս կապսիւլներն իրենց մէջ պարունակում են մաքուր սանտալի էսէնցիա։
Կեղծածներից խուսափելու համար պահանջեցէք դրօշմը, որ խփուած է սև տառերով իւրաքանչիւր կապսիւլի վրայ։
Պահեստը Ռուսիայի դեղատներում։

(M) 27596 29—16

ԳՈԼԼԵՆԴԵՐԻ

ԿՇԿՈՃԻ (ՄԱՍՈՒԼԻ) ՀԵՂՈՒԿ

Ոչնչացնում է կոշկոճը և աւելմսները։
ՍՐՈՒՄԱԿԻ ԳԻՆԸ 35 ԿՈՊ.

2 սրուակը պոստով Եւրոպական Ռուսիայում ուղարկւում է ՄԷԿ ՐՈՒԲԼՈՎ։

Կարելի է ստանալ Կայսրութեան դեղատնային և պարֆիւմերային բոլոր խանութներում.

ԳԼԽԱՒՈՐ ՊԱՀԵՍՏԸ
Лабораторія І. Голлендеръ.
С. ПЕТЕРБУРГЪ.
Демидовъ пер. д. № 1.
(М.) 30326. 10—6

ՈՒՂԵՐԿՈՒՄ Է ՊՈՍՏՈՎ
2 Р. 25 К. ՀԱՆԳԱՐԱԿԱՒՈՐՈՎ
ԵՒՐՈՊԱԿԱՆ ՌՈՒՍԻԱՑՈՒՄ
ԳԼԽԱՒՈՐ ՊԱՀԵՍՏԸ
ТОРГОВЫЙ ДОМЪ
Парфюмерная Лабораторія І. Голлендеръ
С. ПЕТЕРБУРГЪ
Демидовъ переулокъ № 1.
М.)—955. 11—8

ԱՄԵՆԱՑԱՑՏԻ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ



ՌՈՒԵԼՆԵՐ

ԴԱՇՆԱՄՈՒՐՆԵՐ

Փիսհարմոնիումներ ջութակներ Ծառ-կիներ, ֆլէյտներ, կլարնետներ, ծանսախաղեր, լարեր եւ այլն եւ այլն

Բոլոր տեսակ գործիքների համար գինը կարելի է վճարել մաս առ մաս,

ՆՈ.-ՊՐԵՍՍԿՈՒԱՆՏ ԵԸ
ՈՒՂԱՐԿՈՒՄ ԵՆ ՁՐԻ

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՆԵՐԻ ԵՒ ՀԱՑՆԱԶԵՐԻ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԴԵՊՕ
Բ. Մ. ՄԻՐԻՄԱՆԵԱՆԻ
МУЗЫКАЛЬНОЕ ДЕПО
Б. М. МИРИМАНЯНЪ
ТИФЛИСЪ, ДВОРЦОВАЯ УЛ.
739 30—16

Յակ. Խաչ. Քոչարեանցը
որը ունի
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ-ՊԱՆՍԻՈՆ
և
աշակերտական քնակարան,
եւ վարժ. Օր. Սուի. Խաչ. Քոչարեանցը
Ընդունում են աշակերտուհիներ և պատրաստում են առարկաններից և օտար լեզուներից Միքայէլեան փողոց, Ռէուտովսկայա փող. տ. №33 Նիկոլայեւսկայեան։ 2—1
(814)

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ԵՒ ՊԱՆՍԻՈՆ
ՏԷՐ-ՅՈՎՍԷՓԵԱՆԻ
(Մոլոկա, Սադովայա փող. տուն Մելիքսէթեանի, № 46) Երեխաների ընդունելութիւնը սկսւում է օգոստոսի 20-ից, իսկ ուսումը սեպտեմբերի մէկից։ 10—4
(806)

Մ. Ի. ԱՍԼԱՄԱԶԵԱՆ-ՆԱՀԱՊԵՏԵԱՆԻ
(որ աւարտել է կանանց քարտէզագրական կուրսերը
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԸ
ՓՈԽԱԴՐՈՒՈՒՄ Է
Փբէյլենսկայա փողոցի № 14-րդ տունը։ Երկտեղ երեխաների ընդունելութիւնը՝ ամէնայն օր։ Պատրաստում է միջնակարգ դասընթացների ստորին դասարանները մտնելու համար։ Պարապմունքները սկսեն լու են սեպտեմբերի 1-ից, 10—3
(810)

ՐԱՑՈՒՈՒԹ Է ՐԱՔԱՆՈՐԴԱԿԱՆ ՐԱՖՖԻ
ՍԱՄՈՒԻԼ
Ա. Բ. և Դ. ԴՈՐՔ
ԴԱՒԻԹ-ԲԷԿ
Բ. և Դ. ԴՈՐՔԸ ՎՆՐԱՆՈՒՆ
և
ԿԱՅՏԵՐ
ԼՈՒՍԱՒՈՐ ՆԿԱՐՈՒՈՐԴ ՀԱՏՈՐ
ԳԻՆԸ՝ 2 Ր. 50 Կ. ԵՐԿՔԱ ՄԻԱՍԻՆ՝ 6 ՐՈՒԲԼԻ
ԼՈՒՍԱ ՑԱՒՆԵԼՈՒՈՑ ԳՆԱՈՒ՝ ,, ,, 10 ,,
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԼԻՆԵԼՈՒ Է ԵՒՐՈՊԱՑՈՒՄ ԱՄԵՆԱՔԱՋԱՂ ԿԵՐՊՈՎ
Հեղինակի վաճառքի երկերը ստանալու համար ևս. դիմել.
Тифлисъ Аршаку Раффи
Պրատահմանի համար M—me Raffi
26 Loftus Road, Shepherd's Bush.
(811) LONDON W. 5—3

ՁԱՇԱՐԱՆ „ՊՈՒՐ-ՂՎԻՆՕ“
ԳՈԼՈՎԻՆՍԿԻ ՊՐՈՍՊԵԿՏ
ՏՈՒՆ Ի-Ծ. Կ. Ի. ԲԱԳՐԱՏԻՈՆ-ՄՈՒԽՐԱՆՍԿՈՒ

ՁԱՇԸ. 1) 4 տեսակ և մի բաժակ օղի, 1/2 շիշ դինի, կամ 1 շիշ գարեջուր և մի պաւլճ սուրճ—մէկ րուբլի։ 2) 3 տեսակ և մի բաժակ օղի, 1/2 շիշ դինի, կամ մէկ շիշ գարեջուր և մի պաւլճ սուրճ - 80 կոպ.։ 3) երկու տեսակ և մի բաժակ օղի, 1/2 շիշ դինի, կամ 1 շիշ գարեջուր և մէկ պաւլճ սուրճ—60 կոպ, և 4) երկու տեսակ և մի բաժակ օղի և մի պաւլճ գարեջուր կամ մի բաժակ դինի—40 կոպ.։

ՕՐԻՆԱԿԵԼԻ ԻՈՀԱՆՆՈՑ։ Կերակուրները որպէս Եւրոպական նմանատեսակ և Ասիական ու Տէղական։ Գինը մատչելի են։

ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԻՄԻՋՔՆԵՐ։ ՕՂԻՆԵՐ. Սմիրնովի և Ռոյալ, գոլի, Ջրիտերի և Սարաջևի—բաժակը 5 կոպ.։ Կոնեակ Ջուբրովկա, քինաքիաժի օղի, անգլիական գառն և և այլն—բաժակը 10 կոպ.։ Գինու մի գաւաթը 5 կոպ.։ Մի շիշ «ԿԱԽԵԹԻԱ» 40 կոպ-ից սկսած, 1/2 շիշը 20 կոպ-ից։ Իշխան Բագրատիոն-Մուխրանսկու գինիները 40 կոպ-ից սկսած և աւելի թանկ. իշխան Ջորջաձէինը 35 կոպ-ից սկսած և աւելի թանկ. իշխ. Ճաւճաւաձէինը 30 կոպ-ից սկսած և աւելի թանկ. իսկ 1/2 շիշը 15 կոպ.։

ԳԱՐԵՋՈՐ ՎԵՏՑԵԼԻ։ Գաւաթը 5 կոպ, շիշը 15 կոպ. Բաւարական կաս՝ շիշը 15 կոպ.։ Լիմոնադ, սիփոն և մրգի ղէնի ջրերը 1/2 շիշը 10 կոպ.։ Թէյը և կաֆէը 5 կոպէկ. սուրճը 10 կոպ։

Միևնոյն տեղում առանձին դահլիճում կան 5 հատ Փրէյբուրգի բիլիարդներ, ժամը 30 կ։ Նարդին և շախմատը ցերեկով 15 կ. իսկ գիշերը 20 կ. Ճաշարանն ունի և կահաւորուած սենեակներ 40 կոպէկից մինչև 1 ր. 50 կ. իւրաքանչիւր օր ու գիշերուան համար. ամիսը 10 ր, մինչև 30 ր.

Տարպանօք՝ ԵԳՈՐ ՄԱՄԻԱՆԱՇՎԻԼԻ։
(795) 20—8.

Доз.цензурою, Тифлисъ, Августа 27-го дня, 1897 г. Տպարան Ա. գՆԱՄԻԼԻՔ-ՃԱՐԵԱՆՑԻ։ Типогр. А.О.Меликъ-Шахназаріанца, Головинскій просп. домъ Рейтер